ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

<<ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(<<ՔԾՓԿ>> ԲԲԸ)

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԼԻՑԵՆԶԻԱ 13527

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՔԱՂԱՔ ՎԱՅՔ, ԱՇՈՏ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՓՈՂՈՑ № 4
ՀԱՍՑԵՈՎ 10-003-0015-0037 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ




ԵՐԵՎԱՆ - 2025

«ՔԾՓԿ» ԲԲԸ
Ելք 13 / 64
« 07 » 07 2025 թ.

«Հաստատում եմ»

«ՔԾՓԿ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն՝

Ա.Գյուլխասյան

« » 2025 թ.

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ Վայոց Ձորի մարզ, քաղաք Վայք, Աշոտ Թովմասյանի փողոց № 4 հասցեով 10-003-0015-0037 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված թիվ 1 մանկապարտեզի համալիրի մասնաշենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ**

Աշխատանքը կատարվել է Վայքի համայնքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանի և «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գյուլխասյանի միջև կնքված № ՎՀ-ԳՀԾՁԲ-05/25 առ 09.06.2025 թ. պայմանագրի և դրան հիմք ընդունելով 12.06.2025 թ. համաձայնագրի համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված համալիրի մասնաշենքերի դիտողական և գործիքային ուսումնասիրություն:

Հետազննությունն իրականացվել է «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04–2020 նորմերի, «Շենքերի և կառուցվածքների վերականգնում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20-06-2014 նորմերի, «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ»-ի № 1 հավելվածի և «Շենքերի ու շինությունների վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ»-ի № 2 հավելվածի համաձայն:

Կառույցի երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունները որոշվել են ընտրանքային մոտեցմամբ, չքայքայող եղանակով, «Շմիդտ» տիպի ստուգաչափով, ԳՕՍՏ 22690-88 «Բետոններ. Ամրության որոշում մեխանիկական մեթոդով» ՀՀ Ազգային ստանդարտի պահանջներին համապատասխան:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող շենքի տարածքը գտնվում է I սեյսմիկ գոտում, որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը $A_{max}$ = 0,3 g (ՀՀՇՆ 20.04–2020, ըստ հավելամաս 1-ի)։

Մանկապարտեզի համալիրը բաղկացած է 2 հարկանի ու մեկ հարկանի դաստիարակչական և կենցաղասպասարկման միահարկ, ընդհանուր թվով 3 առանձին մասնաշենքերից։

Դաստիարակչական երկու հարկանի և կենցաղասպասարկման մասնաշենքերը նախագծվել և կառուցվել են 7 բալ սեյսմիկ հաշվարկով մշակված նախագծով և իրենց կոնստրուկտիվ լուծումներով չեն բավարարում այժմյա գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի պահանջներին։

Դաստիարակչական միահարկ մասնաշենքը իրականացվել է 2015 թվականին, տվյալ ժամանակ գործող ՀՀՇՆ II-6.02-2006 նորմերին համապատասխան։

Մանկապարտեզի համալիրի մասնաշենքերի նկարագրումները և զննման արդյունքները բերված են ստորև առանձին-առանձին։

*Դաստիարակչական երկու հարկանի մասնաշենքը*

Այն թեք տեղանքի հարթեցված տեղամասում 1960-ական թվականների վերջում տիպային նախագծով իրականացված, հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, ≈ 12,4 x 18,5 մ արտաքին եզրաչափերով 2 հարկանի, հասարակական գործառնական նշանակության առանձին կառույց է (նկ. 1)։




նկ. 1  Մասնաշենքի ընդհանուր տեսքը

Մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է 3 երկայնական ու 4 լայնական կրող պատերով և միջհարկային ծածկերով:

Մասնաշենքի ձախ կողաձակատի արտաքին երկայնական պատը և դրան հարակցող ներքին երկայնական պատը ստեղծում են դրանց միջև ≈ 1,7 մ լայնությամբ միջանցք, ընդ որում ներքին երկայնական պատն ընդհատվում է սանդղավանդակի տեղամասում, որտեղ այն շարունակվում է ≈ 1,3 մ առանցքային շեղումով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից ու միաձույլ երկաթբետոնից:

Պատերն իրականացված են տուֆաքարի «միդիս» տիպի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Պատերի որմածքում իրագործված են միաձույլ երկաթբետոնե միջուկներ և գոտիներ:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Մասնաշենքի ծածկն ու վերնածածկն իրականացված են հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով, միջանցքում՝ միաձույլ երկաթբետոնից:

Սանդղավանդակը լուծված է պողպատե թեքահեծաններով, երկաթբետոնե հատավոր աստիճաններով և միաձույլ երկաթբետոնե աստիճանահարթակով:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, պողպատե թիթեղից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

***Զննմամբ պարզվեց հետևյալը՝***

- Կառույցն իր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով չի բավարարում գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի պահանջներին, մասնավորապես հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերից ծածկերը, հորիզոնական հարթություններում չեն ապահովում կոշտ սկավառակների աշխատանքը:
- Մասնաշենքի պատերում կան առանձին ճաքեր մինչև 2 մմ բացվածքով (նկ. 2), ինչպես նաև երկայնական ու լայնական պատերի հանդիպակաց տեղամասերում առաջացել են տարանջատման ճաքեր մինչև 1,5 մմ բացվածքով (նկ. 3):




նկ. 2  Պատերում առկա ճաքերի տեսքը




նկ. 3  Երկայնական ու լայնական պատերի հանդիպակաց տեղամասերում տարանջատման ճաքերի տեսքը

– Մասնաշենքի երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունները կազմում են 22-24 ՄՊա։

Ելնելով հետազննության արդյունքներից մասնաշենքի տեխնիկական վիճակն ընդհանուր առմամբ գնահատվում է ***բավարար***, իսկ վնասվածության մակարդակն ըստ գործող ՀՀՇՆ 20.04–2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափանիշների դասվում է ***2-րդ աստիճան*** ։

Մասնաշենքի վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակն ըստ գործող ՀՀՇՆ 20.06-2014 նորմերի հավելված 1-ի ընդունվում է սեյսմազինվածության բարձրացում։

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով մասնաշենքի բավարար տեխնիկական վիճակը, դրա հիմնանորոգումը տեխնիկապես հնարավոր է հետևյալ հանձնարարականների կատարման պայմանով.

— Ճշգրտել տարածքի սեյսմաերկրաբանական պայմանները,
— Կատարել մասնաշենքի հիմքերի ուժեղացումը միաձույլ երկաթբետոնե ընդլայնման և անհրաժեշտության դեպքում տակդիրման եղանակով,
— Մասնաշենքի պատերն ուժեղացնել պողպատե ցանցի վրայով ցեմենտաավազային տորկրետ սվաղով, ընդ որում արտաքինները միակողմանի, իսկ ներքինները երկկողմանի,
— Մասնաշենքի ներքին երկայնական պատի ընդհատված տեղամասում, դրա երկայնական առանցքի շարունակությամբ, իրականացնել միաձույլ երկաթբետոնե շրջանակ, սկսած հիմքերից,
— Մասնաշենքի ծածկերը հորիզոնական հարթություններում կոշտ սկավառակների բերելու նպատակով, ծածկասալերի մաքուր մակերևույթի վրա տեղադրել պողպատե ցանցեր, ամրակապելով դրանք ծածկասալերի ու դրանց միջև երկայնական արանքներում տեղադրվող պողպատե հարթ կարկասների հետ և բետոնացնել B15 դասի մանրահատիկավոր բետոնով, նախապես կատարելով տանիքի, բաժանարար պատերի և միջնորմների ապամոնտաժումը,
— Վերականգնել մասնաշենքի տանիքը և կատարել վերահատակագծման աշխատանքները,
— Մասնաշենքում կատարել հիմնանորոգման աշխատանքներ,
— Մասնաշենքի շուրջ իրագործել կանոնակարգված ջրահեռացմամբ նոր սալվածք։

Բոլոր նշված շինարարական աշխատանքները պետք է կատարել գործող շիննորմերին համապատասխան մշակված նախագծի համաձայն։

Մասնաշենքի պահպանումը, ուժեղացման աշխատանքների կատարման պայմանով, կամ դրա ապամոնտաժումը պետք է որոշել համապատասխան տեխնիկատնտեսական հաշվարկի համադրման միջոցով:

*Կենցաղսպասարկման մասնաշենքը*

Այն թեք տեղանքի հարթեցված տեղամասում 1960-ական թվականների վերջում տիպարային նախագծով իրականացված, հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, ≈ 6,2 x 15,8 մ արտաքին եզրաչափերով, 1 հարկանի, հասարակական գործառնական նշանակության առանձին կառույց է (նկ. 4):




նկ. 4 Կենցաղսպասարկման մասնաշենքի տեսքը

Մասնաշենքը աջ կողաճակատից ունի ≈ 3,0 x 5,0 մ չափերով միահարկ կցակառույց հատվածամաս (նկ. 5):




նկ. 5 Կցակառույց հատվածամասի տեսքը

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական ու լայնական պատերով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից:

Պատերն իրականացված են տուֆաքարի «միդիս» տիպի շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Վերնածածկն իրականացված է միաձույլ երկաթբետոնե սալերի տեսքով:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, պողպատե թիթեղից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

***Զննմամբ պարզվեց հետևյալը՝***

- Մասնաշենքի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ նշանակալի ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են բավարար տեխնիկական վիճակում:
- Մասնաշենքի աջ կողաճակատից կցակառույց հատվածամասն իրականացվել է 3 արտաքին պատերով, փայտե տարրերից վերնածածկով, որպես օժանդակ տարածք:

Ելնելով հետազննության արդյունքներից մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվում է ***բավարար***, իսկ վնասվածության մակարդակն ըստ գործող ՀՀՇՆ 20.04–2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափանիշների դասվում է ***2-րդ աստիճան***:

Մասնաշենքի վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակն ըստ գործող ՀՀՇՆ 20.06-2014 նորմերի հավելված 1-ի ընդունվում է սեյսմազինվածության բարձրացում:

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով մասնաշենքի բավարար տեխնիկական վիճակը, դրա հիմնանորոգումը տեխնիկապես հնարավոր է հետևյալ հանձնարարականների կատարման պայմանով.

- Ապամոնտաժել մասնաշենքի կցակառույց հատվածամասը և անհրաժեշտության դեպքում վերականգնել՝ գործող շիննորմերին համապատասխան կոնստրուկտիվ համակարգով,
- Կատարել պատերի հիմքերի ուժեղացումը միաձույլ երկաթբետոնե ընդլայնմամբ,
- Մասնաշենքի պատերն ուժեղացնել պողպատե ցանցի վրայով, ցեմենտաավազային տորկրետ սվաղով, արտաքինները միակողմանի, ներսի կողմից, իսկ ներքինները երկկողմանի,

— Համապատասխան կոնստրուկտորական վերահաշվարկի հիմնավորմամբ, մասնաշենքում իրագործել լայնական միաձույլ երկաթբետոնե դիաֆրագմաներ կամ շրջանակներ, սկսած հիմքերից,
— Մասնաշենքում կատարել հիմնանորոգման աշխատանքներ,
— Մասնաշենքի շուրջ իրագործել կանոնակարգված ջրահեռացմամբ նոր սալվածք:

Բոլոր նշված շինարարական աշխատանքները պետք է կատարել գործող շիննորմերին համապատասխան մշակված նախագծի համաձայն:

<u>*Դաստիարակչական միահարկ մասնաշենքը*</u>

Այն թեք տեղանքի վրա, բարեգործական ֆինանսավորմամբ 2015 թվականին իրականացված, հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, ≈ 12,4 x 15,3 մ արտաքին եզրաչափերով, հասարակական գործառնական նշանակության, 1 հարկանի առանձին կառույց է (նկ. 6):







նկ. 6 Միահարկ դաստիարակչական մասնաշենքի տեսքը

Մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը կարկասային է, լուծված երկայնական միաձույլ երկաթբետոնե շրջանակներով, երկայնական ու լայնական պատերով և վերնածածկով:

Շրջանակների սյուների ու պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից ու միաձույլ երկաթբետոնից:

Շրջանակների սյուներն ունեն ≈ 40 x 40 սմ լայնական հատվածքի չափեր, իսկ պարզունակները ≈ 50 x 40 սմ:

Պատերն իրականացված են կանոնավոր ձևի տուֆաքարի երկշերտ շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Մասնաշենքի գլխավոր ճակատը լուծված է ճարտարապետական հորինվածքով և երեսպատված է դեկորատիվ քարի սալիկներով:

Վերնածածկն իրականացված է միաձույլ երկաթբետոնե սալերի տեսքով:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, պողպատե թիթեղից ծածկույթով, կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ:

Մասնաշենքի շինարարական աշխատանքները չեն հասցվել ավարտին, մասնավորապես.

- չի իրականացվել արտաքին պատերի հարդարումը (երեսպատումը), բացառության գլխավոր ճակատի,
- իրականացված չէ մասնաշենքի շուրջի սալվածքը,
- չեն կատարվել տարածքի բարեկարգման աշխատանքները,

***Զննմամբ պարզվեց հետևյալը***

- Մասնաշենքն իր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով հիմնականում բավարարում է գործող ՀՀՇՆ20.04-2020 նորմերի դրույթներին (մասնաշենքն ունի միայն մուտի ու ելքի մեկ բացվածք, էվակուացիոն մուտքերը բացակայում են):

- Մասնաշենքի կրող կոնստրուկցիաները չունեն ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են լավ տեխնիկական վիճակում:

- Մասնաշենքի երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունները կազմում են 28-30 ՄՊա (նկ. 7):




նկ. 7 Երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրության որոշման գործընթացի տեսքը

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

– Մասնաշենքի ներքին տարածքը գտնվում է նորոգման վիճակում:

Ելնելով հետազննության արդյունքներից մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվում է ***լավ***, իսկ վնասվածության մակարդակն ըստ գործող ՀՀՇՆ 20.04–2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափանիշների դասվում է ***1-ին աստիճան*** ։

Հաշվի առնելով վերը նշվածը մասնաշենքի բնականոն ու անվտանգ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ շինարարական աշխատանքները.

- Կատարել մասնաշենքի արտաքին պատերի դրսի մակերեսի հարդարումը կամ երեսպատումը,
- Մասնաշենքի շուրջ իրականացնել կանոնակարգված ջրահեռացմամբ նոր սալվածք, նախապես կատարելով արտաքին պատերի ուղղաձիգ ջրամեկուսացումը,
- Մասնաշենքում իրագործել մուտք ու ելքի լրացուցիչ բացվածքներ:
- Կատարել մասնաշենքի շրջի տարածքի բարեկարգումը:

Բոլոր նշված շինարարական ավարտական աշխատանքները պետք է կատարել անհատական մշակված նախագծի համաձայն:

**Լաբորատորիայի վարիչ՝** **Ռ.Խաչատրյան**

**Ճարտարագետ՝** **Մ.Հարությունյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001425, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-09-25, «ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ Փ., 3

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 25.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀԱԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG8F-92E3-BFD1-C789

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):